# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

«15» հունվարի 2024 թվականի N: 12 -Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N:1510-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման» կարգի 12-րդ կետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի 2024 թվականի աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Ձև N 1
Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2024 թվականի հունվարի 15-ի N12 -Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

(համապատասխան պետական կառավարման մարմնի աշխատակազմի անվանումը)

| NN ը/կ | Աշխատանքի անվանումը | Աշխատանքի տեսակը | Աշխատանքի նպատակը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | ՀՀ Շիրակի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվելիք շինարարության և հիմնանորոգման աշխատանքների գործընթացի կազմակերպում, մարզի բնակավայրերում քաղաքաշինական գործունեության համակարգում և ոլորտում առկա հիմնախնդիրների ծրագրավորում: Երկրաշարժից հետո տեղադրված/ կառուցված ոչ հիմնական շինությունների քանդման և տարածքների ազատման, ինչպես նաև քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխանող շինությունների օրինականացմանն ուղղված մոտեցումների սահմանում: ՀՀ Շիրակի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացի ապահովում: Տարածքային մակարդակում պետական քաղաքաշինական քաղաքականության իրագործման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծում **/«Քաղաքաշինության կոմիտե» բաժնի կետ 1/**: Շենքերի ու շինությունների անձնագրավորման համակարգի ներդրում **/«Քաղաքաշինության կոմիտե» բաժնի կետ 9/**: | | ՀՀ օրենսդրության, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարման ապահովում, ծրագրավորված աշխատանքների իրականացում, քաղաքաշինության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման նպատակով զարգացման ծրագրերի կազմում: Շենքերի և շինությունների անձնագրավորման, ինչպես նաև անբավարար տեխնիկական վիճակում գտնվող շենքերի և շինությունների հետագա շահագործման հետ կապված հարցերի կանոնակարգում: Երկրաշարժից հետո տեղադրված/ կառուցված ոչ հիմնական շինությունների հիմնախնդիրների կանոնակարգում **/«Քաղաքաշինության կոմիտե» բաժնի կետ 17/**: Սահմանամերձ համայնքներում քաղաքաշինական գործունեության աջակցություն **/«Քաղաքաշինության կոմիտե» բաժնի կետ 1.3/**: «Քաղաքաշինության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագծերի փաթեթին հավանություն տալու, «Շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշումների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում **/«Քաղաքաշինության կոմիտե» բաժնի կետ 9.1/**: |

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Բնակարանային քաղաքականության և ենթակառուցվածքների գործունեության բարելավման ուղղությամբ աշխատանքների իրականացում:<br>Բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնակավայրերում աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավում **/«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի կետ 5/:**<br>Երկրաշարժից հետո տեղադրված/ կառուցված ոչ հիմնական շինությունների հիմնախնդիրների կանոնակարգում **/«Քաղաքաշինության կոմիտե» բաժնի կետ 17/:** | Նպատակային | Բնակարանային հիմնախնդրի լուծում և ազգաբնակչությանը կոմունալ ծառայությունների մատուցման ապահովում:<br>Գոյացող աղբի պատշաճ կերպով հավաքման, տեղափոխման և հեռացման կամ վերամշակման գործընթացների ապահովում **/«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի կետ 5.3/:**<br>Ոչ հիմնական շինությունների հետագա տնօրինման և դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հետ կապված մոտեցումները և առաջնահերթությունները սահմանող Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում **/«Քաղաքաշինության կոմիտե» բաժնի կետ 17.1/:**<br>Ոչ հիմնական շինությունների հետագա տնօրինման և դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հետ կապված Կառավարության կողմից սահմանված մոտեցումների և առաջնահերթությունների հիման վրա ծրագրերի մեկնարկ **/«Քաղաքաշինության կոմիտե» բաժնի կետ 17.2/:** |

Միջհամայնքային հասարակական տրանսպորտի աշխատանքների կազմակերպում, ավտոճանապարհների վերանորոգում, սպասարկում և շահագործում, ոլորտում առկա հիմնախնդիրների ծրագրավորում:
Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների կանխարգելում **/«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի կետ 59/:**
Հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ ընթացիկ ստուգումների, վերահսկողության և հողային հաշվեկշիռի կազմման գործընթացի իրականացում

Մարզի միջհամայնքային երթուղիներում հասարակական տրանսպորտի անխափան երթևեկության կազմակերպում, ավտոճանապարհների շինարարություն, հիմնանորոգում և պահպանություն, ոլորտի հիմնախնդիրների լուծման նպատակով ծրագրերի կազմում:
Կանոնավոր ուղևորափոխադրումներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում, կանոնավոր ուղևորափոխադրումների արդյունավետ կարգավորում, այդ թվում միասնական երթուղային ցանցի ձևավորում:
Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների գույքագրում և ճանապարհային երթևեկության անվտանգությանը սպառնացող օբյեկտների ապամոնտաժման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում /**«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի կետ 59.1/:**
Հողաշինության և հողօգտագործման ոլորտում ՀՀ օրենսդրության պահանջների ապահովում:

| | | |
|---|---|---|
| Մարզի բնակչության բժշկական օգնության կազմակերպման և որակյալ բուժօգնության ապահովման նկատմամբ հսկողության ու հաստատված ամենամյա չափորոշիչների, բուժհաստատությունների գործունեության կանոնակարգող իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում:<br>Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով տրամադրվող ծառայությունների (աշխարհագրական և ֆինանսական) մատչելիության ապահովում:<br>Երեխաների առողջական ցուցանիշների բարելավում, զարգացման բնածին խանգարումների վաղ հայտնաբերում ու շտկում,հաշմանդամության ու մահացության կանխարգելում **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 12/:**<br>Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և վաղ հայտնաբերում **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 5.7/:**<br><br>Մայրական, վերարտադրողական առողջության, առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավում **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 10/:**<br>Առողջապահական ոլորտի մարդկային | | Բուժհաստատությունների կողմից մարզի ազգաբնակչությանը որակյալ բժշկական օգնության ցուցաբերում:<br>Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով առողջ ապրելակերպի խթանում:Պայքար առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ:<br>Առողջապահական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում:<br>Սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդությունների դեմ պայքար:<br>Մարզային բնակչության համար առողջապահական ծառայությունների հավասար հասանելիության ու մատչելիության ապահովում:<br>Մարդակենտրոն, մրցունակ, արդյունավետ, անվտանգ, որակյալ առողջապահական համակարգի ստեղծում:<br>Ադրենոգենիտալ համախտանիշի նորածնային սկրինինգային ծրագրի ներդնում **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 12.1/:** |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | ներուժի և որակի կառավարում **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 23/:**<br>Շտապ օգնության ծառայության արագ արձագանքման, մեկ միասնական կենտրոնից ղեկավարման, հանրապետության ամբողջ տարածքում շտապ և անհետաձգելի բժշկական օգնության կանչերի սպասարկումն առավել օպերատիվ և ռացիոնալ կազմակերպման ապահովում **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 26/:**<br><br>Մարզում սոցիալական աջակցության /պետական և ոչ պետական/ ծրագրերի իրականացում և համակարգում:<br>Ընտանիքի, կանանց և դժվարին իրավիճակում գտնվող /այդ թվում առանց ծնողական խնամքի մնացած/ երեխաների հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացում:<br>Յամընդհանուր ներառական հանրակրթության ներդնում, այդ թվում ՝ հատուկ դպրոցների վերակազմակերպման միջոցով Տարածքային մանկավարժահոգե-բանական աջակցության կենտրոններ հիմնադրելու մասին ՅՅ կառավարության որոշումների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում: | Նպատակային | Առողջ ապրելակերպի՝ ներառյալ առողջ սնուցման, ֆիզիկական ակտիվության խթանման, ծխախոտի օգտագործման, ծխախոտի ծխի վնասակար ազդեցության, ալկոհոլի չարաշահմանվնասների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում (էլեկտրոնային հաղորդակցության, կրթական ծրագրերի իրականացման, ինչպես նաև տպագիր նյութերի տարածման իջոցով) **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 5.7/ :**<br>Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով տրամադրվող ծառայությունների (աշխարհագրական և ֆինանսական) մատչելիության ապահովում **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 10.2/ :**<br>Մարզերում պրենատալ սկրինինգի ծառայությունների ուժեղացում **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 10.3/ :**<br>«Բուժքույրական գործի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ծրագրի իրականացմանն աջակցություն **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 23.4/:**<br>Շտապ բժշկական օգնության կենտրոնացված ծառայության ներդրման 2022-2025 թվականների ծրագրի իրականացման գործընթացներին աջակցություն **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 26.1/:**<br>Արդյունավետ սոցիալական աջակցություն և սպասարկում:<br>Ընտանիքի, կանանց և դժվարին իրավիճակում գտնվող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն:<br>Ապահովել հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն բոլոր երեխաների համար: |

| | | | |
|---|---|---|---|
| 3 | Մարզպետարանի և մարզի ՏԻՄ-երի համատեղ ու համաձայնեցված գործունեության կազմակերպում, մարզի համայնքներում իրավական և մասնագիտական հսկողության իրականացում, ավագանու որոշումների իրավաչափության ապահովում և համայնքային ծառայության գործընթացի վերահսկում: Համայնքներին սպառնացող վտանգների դասակարգում ըստ առաջնայնության՝ վտանգների, խոցելիության և կարողությունների վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա: Համայնքներում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների դասակարգում՝ համայնքի բյուջետային միջոցներին համապատասխան: ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախընտրական խոստումների իրականացում /**«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի կետ 107/:**<br><br>Հասարակական կարգի պահպանման, զինապարտների հաշվառման, զորակոչի, արտակարգ իրավիճակների վերացման, տարերային և տեխնածին աղետների կանխման, քաղաքացիական պաշտպանության և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման աշխատանքների իրականացում: Սողանքների ռիսկի կառավարում /**«Արտակարգ իրավիճակների նախարարություն» բաժնի կետ 10/** | Նպատակային | Մարզի համայնքների ղեկավարների սեփական և պետության պատվիրակած լիազորությունների ու համայնքների ավագանիների լիազորությունների իրականացման նկատմամբ հսկողության իրականացում, համայնքային ծառայության գործընթացի ապահովում: Համայնքների աղետներին դիմակայունության մակարդակի բարձրացում: Աղետների վաղ ազդարարման համակարգի զարգացում: Հայաստանի Հանրապետության տարածքի բազմակենտրոն զարգացման ապահովում:<br><br>ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախընտրական խոստումներից բխող քայլերի իրականացում ուղղված համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը /**«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի կետ 107.1/:**<br><br>Ոլորտում ՀՀ օրենսդրության պահանջների ապահովում: Վտանգավոր սողանքային տեղամասերի գործիքային հետազոտություն, սողանքային տեղամասերում գործիքային հետազոտությունների արդյունքների հիման վրա կանխարգելիչ միջոցառումների իրականացում /**«Արտակարգ իրավիճակների նախարարություն» բաժնի կետ 10.1/** |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | Մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացման ապահովում ուսումնական հաստատությունների կողմից, ՀՀ կրթության մասին օրենսդրության և այլ նորմատիվ իրավական ակտերի կատարման վերահսկում:<br>Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառում ուսուցման ու կրթության կառավարման համակարգերում **/«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բաժնի կետ 2/:**<br>Համընդհանուր ներառական հանրակրթության ներդնում, այդ թվում ` հատուկ դպրոցների վերակազմակերպման միջոցով Տարածքային մանկավարժահոգե-բանական աջակցության կենտրոններ հիմնադրելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում :<br>ՀՀ Շիրակի մարզում անցում համընդհանուր ներառման **/«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բաժնի կետ 4/:**<br><br>Մարզում մշակութային և սպորտային պետական քաղաքականության իրականացման շրջանակներում մարզամշակութային հաստատությունների աշխատանքների կազմակերպում, պետական ծրագրերով նախատեսված, պետական,ազգային ու այլ տոների հետ կապված միջոցառումների իրականացում:<br>Բնակչության տարբեր տարիքային խմբերի համար զանգվածային սպորտի տարածմանը և առողջ ապրելակերպի քարոզմանն ուղղված ծրագրերի իրականացման անընդհատության ապահովում **/«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն», «Սպորտ» բաժնի կետ 50/:**<br>Հայ մշակույթի հանրահռչակում, հանրային լայն մասնակցության ապահովում մշակութային կյանքին **/«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն», «Մշակույթ» բաժնի կետ 33/:** | Նպատակային | ՀՀ օրենսդրության պահանջների կատարում, կրթության իրավունքի, ուսումնական գործընթացի կազմակերպման պայմանների ապահովում, կրթության որակի և արդյունավետության բարձրացում:<br>Առարկայական ուսուցիչների պակաս ունեցող դպրոցներում տվյալ առարկայի էլեկտրոնային ուսուցման համակարգի ներդնում, էլեկտրոնային ուսուցման գործիքների զարգացում **/«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բաժնի կետ 2.3/:**<br>Ապահովել հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն բոլոր երեխաների համար:<br>Փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցներում որակյալ կրթության կազմակերպում:<br>Օրենսդրության պահանջների կատարում, մշակութային բարիքների մատուցում, առողջ և ակտիվ կենսակերպի ապահովում<br>«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի, սիրողական սեղանի թենիսի, սիրողական լողի, խճուղավազքի, մրցաշարերի անցկացում, մասնակցության ապահովում,<br>մասսայական սպորտին առնչվող ծառայությունների իրականացում **/«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն», «Սպորտ» բաժնի կետ 50.1, 50.2, 50.3, 50.4, 50.5, 50.6/:**<br>Դպրոցականների համար բաժանորդային ծրագրի իրականացում **/«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն», «Մշակույթ» բաժնի կետ 33.6/:** |

| | | | |
|---|---|---|---|
| 5 | Աջակցություն մարզի սոցիալ-տնտեսական և զբոսաշրջության զարգացման ծրագրերի իրականացմանը, սոցիալ-տնտեսական վիճակի և զբոսաշրջության զարգացման վերլուծություն, համապատասխան հաշվետվությունների կազմում ու ներկայացում:<br>Հանրապետության տարածքային համաչափ զարգացմանն ուղղված` Հայաստանի Հանրապետության համայնքների ենթակառուցվածքների զարգացում **«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի կետ 4/:** | Նպատակային | Աջակցություն մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը:<br>ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, համայնքների կողմից ներկայացված և սահմանված չափորոշիչներին բավարարող ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի շարունակության ապահովում **/«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի կետ 4.1/:** |

| | | | |
|---|---|---|---|
| | Գյուղատնտեսության բնագավառի օրենսդրական ակտերի կատարման ապահովում, բուսաբուծությանն ու անասնապահությանն առնչվող մարզպետարանին վերապահված լիազորությունների իրականացում: Գյուղատնտեսական կենդանիների հակահամաճարակային միջոցառումների և պատվաստումների ծրագրի կազմակերպում, գյուղական համայնքների անասնաբույժների կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման արդյունքների ուսումնասիրություն:<br>Գյուղատնտեսության զարգացում և արտադրողականության բարձրացում **/«Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի կետ 9/:** | | Մարզի տարածքում գյուղատնտեսության ոլորտի աշխատանքների համակարգում, պետական աջակցության ծրագրերի իրականացմանն աջակցություն և մասնակցություն, գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառում:<br>Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակայնորեն օգտագործելու ուղղությամբ խթանների ու մեխանիզմների մշակում: Մեքենատրակտորային համակազմի թարմացման և գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ գյուղատնտեսության կարիքների բարելավում: Գյուղատնտեսական և գինեգործական արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանն աջակցող մեխանիզմների մշակում և ներդրում:<br>Ագրոպարենային համակարգի սարքավորումների, նոր տեխնոլոգիաների, սննդի անվտանգության համակարգերի ներդրման աջակցություն՝ համաձայն ՀՀ կառավարության 29.06.2023թ. N 1083-Լ որոշման **/«Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի կետ 9.5/:**<br>Կենդանիների և բույսերի հիվանդությունների կանխարգելման արդյունավետ համակարգի ներդրման ապահովում:<br>Անասնաբուծության ճյուղի զարգացման խթանում **/«Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի կետ 9.3/:**<br>Գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական գործունեության ընդլայնում և ագրոտուրիզմի զարգացում: Գյուղատնտեսության աջակցության հիմնական սկզբունքների, մեթոդաբանության և ռազմավարության սահմանում:<br>Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի իրականացմանն աջակցություն **/«Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի կետ 9.8/:** |

| | | | |
|---|---|---|---|
| 6 | Մասնակցություն բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական միջոցառումների իրականացմանը, վերահսկողություն բնապահպանական օրենսդրության կատարման նկատմամբ և համագործակցություն բնապահպանական խնդիրներ իրականացնող կազմակերպությունների հետ:<br>Բույսերի պաշտպանության և կարանտինի հիվանդությունների բացահայտման ու վերացմանն ուղղված աշխատանքների ուսումնասիրում:<br>Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացում **/«Շրջակա միջավայրի նախարարություն» բաժնի կետ 6/:** | Նպատակային | Բուսաբուծության ճյուղի զարգացման խթանում: **/«Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի կետ 9.2/:**<br>Անասնաբուծության ճյուղի զարգացման խթանում:<br>Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներին աջակցություն:<br>Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում **/«Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի կետ 9.7/:**<br>Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի իրականացում:<br>Դաբաղ հիվանդության շճահետազոտության միջոցառումների իրականացում **/«Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի կետ 9.9/:**<br>Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների իրականացում **/«Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի կետ 9.10/:**<br>Մարզի տարածքում ռեսուրսների արդյունավետ օգտագործման և անվտանգ շրջակա միջավայրի ապահովում «Արթիկ քաղաքի փակ քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում» ծրագրի իրականացում **/«Շրջակա միջավայրի նախարարություն» բաժնի կետ 6.6/:** |
| 7 | Զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման և անցկացման գործընթացների իրականացում | Ընթացիկ | Ոլորտում ՀՀ օրենսդրության պահանջների ապահովում |

| | | | |
|---|---|---|---|
| 8 | Մարզպետարանի, մարզային ենթակայության կազմակերպությունների , համայնքների ֆինանսատնտեսագիտական աշխատանքների իրականացում: Մարզպետարանի պահպանման ծախսերի և պետական բյուջեով նախատեսված ծրագրերի հաշվապահական հաշվառման և հաշվապահական հաշվետվությունների կազմման ու ներկայացման իրականացում | Ընթացիկ | ,,ՀՀ բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքի և ոլորտի այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարում: ,,Հաշվապահական հաշվառման մասին,, ՀՀ օրենքի և ոլորտի այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարում |
| 9 | Մարզպետարանում փաստաթղթաշրջանառության կազմակերպում և վարչատնտեսական ոլորտի աշխատանքների իրականացում: Անձնակազմի կառավարման բնագավառում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված աշխատանքների իրականացում: Մարզպետարանի գործունեության համակողմանի լուսաբանում, հասարակայնության հետ կապերի ապահովում | Ընթացիկ | Փաստաթղթաշրջանառության և վարչատնտեսական գործառույթների ապահովում: ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ապահովում: ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ապահովում: Հանրային իրազեկում |
| 10 | Նախապատրաստված փաստաթղթերի նախագծերի և ՏԻՄ-երի իրավական ակտերի օրենսդրության համապատասխանության, ինչպես նաև դատական ատյաններում ներկայացուցչության ապահովում | Ընթացիկ | ՀՀ օրենսդրության պահանջների ապահովում |
| 22 | Այլ ընթացիկ աշխատանքներ | Ընթացիկ | |
| 23 | Չպլանավորված աշխատանքներ | Ընթացիկ | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | |

* ներգրավված ինքնուրույն ստորաբաժանումներ

| | |
|---|---|
| ստորաբաժանում 01 | Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն |
| ստորաբաժանում 02 | Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն |
| ստորաբաժանում 03 | Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն |
| ստորաբաժանում 04 | Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն |
| ստորաբաժանում 05 | Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին |

| | |
|---|---|
| ստորաբաժանում 06 | Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն |
| ստորաբաժանում 07 | Զորահավաքային նախապատրաստության բաժին |
| ստորաբաժանում 08 | Ֆինանսական վարչություն |
| ստորաբաժանում 09 | Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն |
| ստորաբաժանում 10 | Իրավաբանական բաժին |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ**

*Մուշեղ Չապաևի Մուրադյան*

*Իսկականի հետ ճիշտ է՝* ______________________________ *ստորագրություն*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ**

*Գեղամ Ֆելիքսի Բաղդասարյան*

*Իսկականի հետ ճիշտ է՝* ______________________________ *ստորագրություն*

| Աշխատանքի գնահատման չափանիշը |
| --- |
| 5 |

Գործընթացների իրականացում օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում և սահմանված կարգերին համաձայն, լրամշակված ծրագրի սահմանված ժամկետում ներկայացում: Ընթացակարգի վերահսկում, պահանջվող փաստաթղթերի առկայություն:
Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների անձնագրավորման գործընթացի կարգավորում, անձնագրերին ներկայացվող պահանջների սահմանում:Տարածքների համալիր զարգացման նպատակով կառուցապատման ծրագրերի իրականացման համար վթարային հասարակական և արտադրական նշանակության շենքերը և շինությունները քանդելու իրավական կարգավորում: Վթարային, քանդման կամ վերակառուցման ենթակա բազմաբնակարան բնակելի շենքերը, բնակարանները, անհատական բնակելի տները բնակության համար ոչ պիտանի ճանաչելու կարգ:
Ծրագրի շահառու ճանաչված, սակայն ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները դեռևս չբարելավված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պետական պարտավորությունների կատարում:
Աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու գործընթացների կազմակերպում՝ համաձայն ՀՀ կառավարության 13.10.2022թ. N 1601-Լ որոշման **/«Քաղաքաշինության կոմիտե» բաժնի կետ 17.1/:**
Միկրոռեգիոնալ փաստաթղթերի շրջանակներում հաստատված առաջարկությունների հիման
վրա կառուցապատման ներդրումային ծրագրերի փաթեթների մշակման միջոցով սահմանամերձ համայնքների քաղաքաշինական հիմնախնդիրների լուծում, անվտանգ կենսամիջավայրի ապահովում, ժողովրդագրական ցուցանիշների բարելավում **/«Քաղաքաշինության կոմիտե» բաժնի կետ 1.3/:**

- Ընդունված օրենսդրական փոփոխություններ և հաստատված անձնագրավորման կարգ
- Պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված և հաստատված միջոցառումների ծրագիր՝ ըստ առաջնահերթությունների կազմված ժամանակացույց
- Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների անձնագրավորման գործընթացի մեկնարկ՝ ըստ միջոցառումների ծրագրի, փուլային սկզբունքով: **/«Քաղաքաշինության կոմիտե» բաժնի կետ 9.1/:**

Ամբողջական փաթեթների կազմում և սահմանված ժամկետներում ՀՀ համապատասխան նախարարություններին ներկայացում, անօթևան ընտանիքներին իրազեկման ապահովում սահմանված ժամկետում, իրականացվող աշխատանքների վերաբերյալ լիարժեք և պարբերական տեղեկատվության ներկայացում, պահանջվող փաստաթղթերի ամբողջականություն, պայմանագրերի առկայություն:

Աղբի հավաքման արդյունավետ սխեմաների ներդրում, տարբեր տեսակի թափոնների գործածության համար ընթացակարգերի կիրարկում, ինչի շնորհիվ թափոնների առանձին տեսակների կրկնօգտագործման, օգտահանման և վերամշակման արդյունքում կնվազեցվի աղբավայրերում տեղադրվող աղբի ծավալը **/«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի կետ 5.3/:**

Իրավական հիմքերի ստեղծում՝

- Աղետի գոտու բնակավայրերի հողամասերը ոչ հիմնական շինություններից ազատման և քաղաքաշինական միջավայրի վերականգնման համար՝ որպես առաջնահերթություն դիտարկելով պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը:
- ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման համար՝ տարբերակված մոտեցմամբ, կախված ընտանիքի անօթևանի կարգավիճակում գտնվելու հիմքերից **/«Քաղաքաշինության կոմիտե» բաժնի կետ 17.1/:**

Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժից հետո տեղադրված/կառուցված ոչ հիմնական շինությունների հեռացում, դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցում, առաջնահերթ կարգով դիտարկելով աղետի գոտու քաղաքային բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ազատում՝ տեղադրված/կառուցված ոչ հիմնական շինությունները**/«Քաղաքաշինության կոմիտե» բաժնի կետ 17.2/:**

Ավտոճանապարհների պահպանման պահանջվող մակարդակի համապատասխանություն և սահմանված նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների ապահովում, չվացուցակների համաձայնեցում սահմանված կարգերին համաձայն, լրամշակված ծրագրի սահմանված ժամկետում ներկայացում, մարզային ճանապարհների ընդգրկվածություն, նախատեսված երթուղիներով ուղևորափոխադրման առկայություն, ծրագրերի առկայություն:

Բոլոր համայնքները կապահովվեն արդյունավետ տրանսպորտային սպասարկմամբ, կբարձրանա ուղևորափոխադրումների սպասարկման որակն և վերահսկողությունը:

Անվտանգ երթևեկության ապահովում, ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում օբյեկտների կառուցման կանոնակարգում **/«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի կետ 59.1/:**

Հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ ընթացիկ ստուգումների արդյունքում օրենսդրության պահանջների կատարման օրինականության ապահովում՝ սահմանված ժամկետներում և կարգով: Հաստատված ժամանակացույցին համապատասխան ստուգումների իրականացում, համայնքների հողային հաշվեկշիռների ընդունում, ամփոփում, հաստատման ներկայացում

Մարզում պտղի ուլտրաձայնային ախտորոշման համար ժամանակակից սարքավորումների ձեռքբերում, բուժանձնակազմի ուսուցում:Միջոցառման իրականացման արդյունքում մարզում  կնվազի մեռելածնությունը և պտղի բնածին արատներով պայմանավորված մանկական մահացությունը **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 10.3/ :**

Բոլոր նորածինների մոտ 17OH պրոգեստերոնի որոշում, մինչկլինիկական շրջանում ադրենոգենիտալ համախտանիշով երեխաների հայտնաբերում և հորմոնային բուժման կազմակերպում, որի արդյունքում նաև կբացահայտվի տվյալ համախտանիշի տարածվածությունը մեր պոպուլյացիայում: Սկրինինգին հաջորդող տարիների ընթացքում ակնկալվում է նշված հիվանդացությամբ պայմանավորված ռեանիմացիոն բուժում պահանջող և մահվան դեպքերի նվազեցում **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 12/ :**

ՀՀ օրենսդրության պահանջների ապահովում` առողջության առաջնային պահպանման գործընթացում, մոր և մանկան առողջության պահպանում, մանկական և մայրական մահացության ցուցանիշների իջեցում, բուժանձնակազմի պատասխանատվության բարձրացում: Բուժսպասարկման որակի ցուցանիշների համապատասխանություն գործող ստանդարտներին, բնակչության աճի ապահովում: Առողջ ապրելակերպի և ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների վերաբերյալ միջոցառման իրականացում: Նշված միջոցառման նպատակն է կայունացնել և նվազեցնել առավել տարածված թվով չորս ՈՎՀ-ի առաջացման ռիսկի գործոններին ենթարկվող անձանց թիվը **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 5.7/ :**

Բուժքույրական գործի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ծրագիր: Հաստատված շտապ բժշկական օգնության ծառայությանններդրման ծրագիր, շտապ բժշկական օգնության կենտրոնացված ծառայության առկայություն **/«Առողջապահության նախարարություն» բաժնի կետ 26/:**

Բնակչության առավել անապահով, խոցելի խավի համար պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունների համապատասխանություն սահմանված չափանիշներին, բնակչության սոցիալական աջակցության և սպասարկումների արդյունավետ իրականացում ՍԱՏԳ-ների կողմից սահմանված տեղեկատվության ժամանակին հավաքագրում, վերլուծական տեղեկատվության առկայություն, շեղումների շտկում:

Օրենսդրությամն պահանջների կատարում` կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնողական

անհատական ծրագրերի կազմում, նրանց իրավունքների և շահերի պաշտպանություն, թրաֆիքինգի կանխարգելում, թրաֆիքինգի ենթարկված զոհերի իրավունքների վերականգնում, կանանց վիճակի բարելավում և հասարակության մեջ նրանց դերի բարձրացում, ծրագրերի առկայություն, թիրախային խմբերի վերաբերյալ տեղեկատվության և առաջարկությունների ներկայացում:

Անցում համընդհանուր ներառական կրթությանը:

Համայնքի ղեկավարի սեփական լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացում: Իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային ծրագրի նախագծի կազմում, համայնքների ավագանիների որոշումների համապատասխանեցում ՀՀ օրենսդրության պահանջներին, համայնքապետարանների աշխատակազմերում համայնքային ծառայության և աշխատանքային հարաբերությունների ձևավորման սահմանված կարգի ապահովում, ավագանու որոշումների օրինաչափության վերաբերյալ եզրակացությունների առկայություն, իրավական և մասնագիտական հսկողության ակտերի, տեղեկանքների առկայություն:

Համայնքների խոցելիության և կարողությունների գնահատված տեղեկատվության առկայություն:

Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների առկայություն:

Աղետներին արագ և արդյունավետ արձագանքում, հավաստի օպերատիվ տեղեկատվության տրամադրման հնարավորություններ, մարդկային կորուստների և տնտեսական վնասների նվազեցում:

Շիրակի մարզերի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթեր:

ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցված խոստումների իրականացում **/«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի կետ 107.1/:**

ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, սահմանված ժամկետներում և արդյունավետ ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ոստիկանության մարզային վարչությ ունների հետ համագործակցված աշխատանքի ապահովում, աջակցություն մարզում հասարակական կարգի պահպանման և ամրապնդման աշխատանքների կազմակերպմանը, համապատասխան ծառայություններին անհրաժեշտ օժանդակության ցուցաբերում, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցված աշխատանքների ապահովում:

Բնակչության պաշտպանության, տարածքների, շենքերի և շինությունների, տարբեր նշանակության կառուցվածքների, հաղորդակցության ուղիների անվտանգ և անխափան շահագործման ապահովում **/«Արտակարգ իրավիճակների նախարարություն» բաժնի կետ 10.1/**

Աշխատանքների համապատասխանություն պետական կրթական չափորոշիչներին և սահմանված ժամկետներին, կազմված փաստաթղթերի նախագծերի որակ, սահմանված ժամկետներին, չափորոշիչներին քննությունների անցկացման կանոնների պահանջներին համապատասխանություն, սահմանված փաստաթղթերի առկայություն:

Անցում համընդհանուր ներառական կրթությանը**/«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բաժնի կետ 4.3/:**

Փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների ուսուցչական կազմի համալրում առցանց դասավանդող ուսուցիչներով (ըստ անհրաժեշտության՝ համապատասխան առարկայական ուսուցիչների բացակայության պայմաններում);

Աջակից դպրոցների կողմից իրականացվում է առարկայական ուսուցչի խնդիր ունեցող դպրոցների աշակերտական համակազմի համար տվյալ առարկայի էլեկտրոնային ուսուցում,

էլեկտրոնային ուսուցման գործիքները կատարելագործվում են **/«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բաժնի կետ 2.3/:**

